ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառության սոցիոլոգիական հետազոտություն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ Ս. Վրացյան 73, ք. Երևան, ՀՀ

Հեռ.՝ 578-453, 578-455

Երևան 2018

Բովանդակություն

Ներածություն.....2

ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառելիության հետազոտություն.....4

Ամփոփում.....21

Հավելված.....23

Ներածություն

Տեղեկատվական և հաղորդակցման տեխոլոգիաների ներդրումն ու կիրառումը ուսումնական գործընթացում ներկայումս ոչ միայն կրթության արդյունավետության բարձրացման միջոց է, այլև անհրաժեշտություն: Կրթության և գիտության զարգացման համաշխարհային տենդենցներին հետևելով՝ Հայաստանի հանրակրթական դպրոցներում նույնպես ներդրվել է ՏՀՏ համակարգ: ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների շրջանում ՏՀՏ կիրառելիության առանձնահատկությունները հասկանալու համար իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն ուսուցիչների շրջանում: Վերջինս նպատակ է հետապնդում ուսումնասիրել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունն ուսումնական գործընթացում: Հետազոտության այս մասով առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Վերհանել ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառության նկատմամբ ուսուցիչների դիրքորոշումները:
- Պարզել ուսուցիչների կողմից ուսումնական/դասավանդման գործընթացում ՏՀՏ-ի կիրառման հաճախականությունը:
- Բացահայտել ուսուցիչների համակարգչային հմտությունների մակարդակը:
- Պարզել ուսուցիչների կողմից ուսումնական/դասավանդման գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերը:
- Բացահայտել ուսումնական/դասավանդման գործընթացում ուսուցիչների կողմից կիրառվող կրթական կայքերը և այլ էլեկտրոնային ռեսուրսները:
- Բացահայտել համակարգչային գիտելիքների հիմնական աղբյուրները:
- Բացահայտել ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառման հետ կապված խնդիրները և դրանց լուծման մեխանիզմներն՝ ըստ ուսուցիչների:

ՏՀՏ կիրառության ուսումնասիրության նպատակով իրականացվել է ուսուցիչների ընտրություն՝ բազմաստիճան շերտավորված ընտրանքի սկզբունքներով: Ընտրության առաջին փուլում՝ ներկայացուցչականության սկզբունքի համաձայն պատահականորեն ընտրվել է 499 պետական դպրոց՝ ըստ մարզերի և կրթական ծրագրի աստիճանի: Դպրոցների ընտրանքն իրականացվել է ±3% սահմանային սխալով, իսկ ընտրանքի ճշտությունը կազմել է 97%: Ընտրված դպրոցներում իրականացվել է ուսուցիչների պատահական ընտրություն՝ կրկին ներկայացուցչականության սկզբունքի համաձայն՝ ըստ

ուսուցիչների առարկայական պրոֆիլի՝ հումանիտար, բնագիտական, ճշգրիտ, հասարակագիտական և դասվար/դաստիարակ: Ուսուցիչների ընտրանքն իրականացվել է ±3% սահմանային սխալով, ընտրանքի ճշտությունը կազմել է 95%: Տեղեկատվության հավաքման մեթոդ հանդիսացել է ստանդարտացված հարցման մեթոդը, գործիքը՝ ստանդարտացված հարցաթերթը: Ընտրանքի ծավալը կազմել է 699 ուսուցիչ:

ՀՀ պետական դպրոցներում ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառելիության հետազոտություն

ՀՀ դպրոցների ուսուցիչների շրջանում ՏՀՏ կոմպետենտության մակարդակի և կիրառելիության բնույթի բացահայտման նպատակով ԿՏԱԿ-ն իրականացրել է հարցում ՀՀ բոլոր մարզերի պետական դպրոցների 699 ուսուցիչների շրջանում: Հարցման մասնակցած ուսուցիչներից 52.2%-ն ապրում են քաղաքային բնակավայրերում, իսկ 47.8%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հետազոտությանը ներգրավված ուսուցիչների բաշխվածությանը՝ ըստ բնակության գյուղական և քաղաքային համայնքների կարող եք ծանոթանալ ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 1.



Դիտարկելով հարցվածների բաշխվածությունն ըստ բնակության մարզերի տեսնում ենք, որ հարցված ուսուցիչների 19.6% բնակվում են Երևանում, 10%՝ Շիրակի մարզում, Գեղարքունիքի մարզում բնակվում են 9.9%, Արմավիրի և Լոռու մարզերում՝ 9.6%: Բաշխվածությանն ըստ մյուս մարզերի կարող եք ծանոթանալ գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2.



Հարցմանը մասնակցած ուսուցիչների 85.1%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, 14.9%-ը՝ արական :

Հարցմանը մասնակցած ուսուցիչների կրթական մակարդակի ընդհանուր պատկերը այսպիսինն է. բարձրագույն մանկավարժական կրթություն՝ մագիստրոսի աստիճան ունեցողները կազմում են հարցմանը մասնակցածների 24.9%, բարձրագույն մանկավարժական կրթություն՝ բակալավրի աստիճան՝ 25%, մանկավարժական կրթություն՝ դիպլոմավորված մասնագետ՝ 38.3%: Հարցմանը մասնակցած՝ բարձրագույն ոչ մանկավարժական կրթությամբ ու միջին մանկավարժական կրթությամբ ուսուցիչներ թիվը շատ ավելի փոքր է, և այդ բաշխվածությանը կարող եք ծանոթանալ գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3.



Հարցմանն ընդգրկված ամենաերիտասարդ ուսուցիչը 20 տարեկան է, նա իգական սեռի ներկայացուցիչ է, բնակվում է գյուղական համայնքում և ունի միջին մասնագիտական կրթություն, իսկ ամենատարեց ուսուցիչը 70 տարեկան է, արական սեռի ներկայացուցիչ, բնակվում է քաղաքային համայնքում (Երևան) և ունի մանկավարժական դիպլոմավորված մասնագետի աստիճան: Ուշագրավ է, որ հարցվածների 2.6%-ի տարիքը գերազանցում է ՀՀ կենսաթոշակային տարիքը՝ 63 տարեկան և բարձր: Հարցվածների շրջանում ամենաշատը հանդիպող տարիքային խումբը 46-55 տարեկաններն են՝ հարցվածների 30.5%-ը: Հատկանշական է, որ գյուղական և քաղաքային բնակավայրերի դպրոցներում ուսուցիչների տարիքային կազմի և ստաժի բաշխվածության մեջ վիճակագրական տարբերություններ չկան, այսինքն՝ ուսուցիչների տարիքային խմբերը միևնույն կերպ են բաշխված թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերի դպրոցներում: Ուսուցիչների տարիքային բաշխվածության մասին այլ տվյալներին կարող եք ծանոթանալ գծապատկեր 4–ում:

Գծապատկեր 4.



Արդիական է տեսնել, թե ինչպես է փոխվել հարցմանը մասնակցող ուսուցիչների տարիքի տատանումը վերջին տարիների ընթացքում: Այսպիսով, ստորև բերված գծապատկերից պարզ տեսանելի է, որ միտումների առումով իրավիճակի նույնն է: Այսինքն՝ երիտասարդ դասախոսները բոլոր տարիներին հարցումների ընթացքում կազմել են փոքր խմբում, իսկ թոշակի տարիքի և ավելի տարեց ուսուցիչները բոլոր տարիներին տատանվում է 1.7- ից մինչև 7%:

Գծապատկեր 5.



Հարցմանը ներգրավված են եղել ինչպես «նորաթուխ», այնպես էլ երկար տարիների մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչներ: Այսպես՝ հարցվածների 1.4%-ը ունեն մինչև 1 տարվա աշխատանքային ստաժ, 9.3%-ը՝ 2-5 տարվա, 12.3%-ը՝ 6-10 տարվա, 13.7%-ը՝ 11-15 տարվա, 17.5%-ը՝ 16-20 տարվա և 45.8%-ը՝ 21 և ավել տարվա աշխատանքային ստաժ: Հարցվածների շրջանում ամենաքիչ աշխատանքային ստաժը 1 տարին է, իսկ ամենաշատը՝ 49 տարի:

Գծապատկեր 6.



Ուսուցիչների՝ հետազոտությանը մասնակցության ընտրության չափանիշ է եղել նրանց կողմից դասավանդվող առարկաների ոլորտը՝ հումանիտար, հասարակագիտական, ճշգրիտ, բնագիտական, ինֆորմատիկա: Դիտարկելով ըստ այդ չափանիշի՝ կարելի է տեսնել, որ հարցմանը մասնակցած ուսուցիչների 33.8%-ը դասավանդում է հումանիտար ոլորտի առարկաներ, 26.8%-ը՝ հասարակագիտական, 14%-ը՝ ճշգրիտ, 16.3%-ը՝ բնագիտական և 9.1%-ը՝ ինֆորմատիկա:

Գծապատկեր 7.



Այժմ դիտարկենք ուսուցիչների կողմից ՏՀՏ տիրապետման ու օգտագործման առանձնահատկությունները:

Հարցվածների ընդամենը 3%-ն է նշել, որ դասավանդման գործընթացում ընդհանրապես համակարգիչ չի օգտագործում: Հատկանշական է, որ 60%-ը 5 տարուց ավելի օգտագործում են համակարգիչ դասավանդման գործընթացում, իսկ 21%-ը դասավանդման գործընթացում համակարգիչ օգտագործում է 3-ից մինչև 5 տարվա ընթացքում: Հետաքրքիր է նաև այն, որ հարցված ուսուցիչների 2.3%-ը նշել է, որ տանը համակարգիչ կամ նոութբուք չունի: Դասավանդման գործընթացում համակարգչի օգտագործման մասին տվյալների բաշխումը կարող եք տեսնել ստորև բերված գծապատկերում.

Գծապատկեր 8.



Ընդունված է կարծել, որ երիտասարդ ուսուցիչները պետք է ավելի ավելի ինտենսիվ կիրառեն համակարգչային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում, սակայն այս հետազոտության արդյունքում դասավանդման գործընթացում համակարգիչների օգտագործման ժամանակի և հարցվողների տարիքի միջև ոչ մի վիճակագրական կապ չի բացահայտվել:

Պարզելու համար ուսուցիչների համակարգչային գիտելիքների մակարդակը, ուսուցիչներին խնդրել ենք գնահատել իրենց հմտություններն ըստ 3 աստիճանի՝ «ամենևին չեմ տիրապետում», «տիրապետում եմ բավարար» և «տիրապետում եմ վարժ»: Համակարգչային գիտելիքները գնահատելու առումով հետաքրքրական է նշել, որ հարցվածների 57.9%-ն ընդհանրապես չեն տիրապետում ինտերակտիվ գրատախտակի օգտագործման հմտություններին, իսկ 56.7%՝ Microsoft Access ծրագրին: Հարցվածների մեծ

մասը՝ 63.7%, վարժ տիրապետում են ինտերնետից օգտվելու հմտություններին, իսկ 59.7%-ը՝ էլեկտրոնային փոստի օգտագործման հմտություններին: Համակարգչային գիտելիքների գնահատման հետ կապված այլ տվյալները՝ ստորև՝ գծապատկեր 9-ում:

Գծապատկեր 9.



Այս տվյալները դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ համակրգչային գիտելիքների այսպիսի գնահատումը սուբյեկտիվ է՝ ուսուցիչները գնահատել են իրենք իրենց գիտելիքները: Ինչպես տեսնում ենք, հարցվածների մեծ մասը՝ 57.9%-ը նշել են, որ ամենևին չեն տիրապետում ինտերակտիվ գրատախտակի օգտագործման հմտություններին: Դիտարկելով վերոնշյալ տարբերակը նշած ուսուցիչների պատասխանները՝ տեսնում ենք, որ նրանցից 57.3%-ը բնակվում են գյուղական համայնքներում, իսկ 42.7%-ը՝ քաղաքային: Ինտերակտիվ գրատակտակի օգտագործման հմտություններին ամենևին չտիրապետող ուսուցիչների ցանկում գերակշռում են հետևյալ 3 մարզի բնակիչները՝ Շիրակի մարզ՝ 12.8%, Երևան և Գեղարքունիք՝ 11.6%: Այս հմտությանը ամենևին չտիրապետող ուսուցիչներից 405-ից 345-ը (85.19%) աշխատում են այն դպրոցներում, որտեղ ինտերակտիվ գրատախտակներ չկան, և միայն 60 (14.81%) ուսուցիչներ են, որ, աշխատելով

ինտերակտիվ գրատախտակ ունեցող դպրոցներում, չեն տիրապետում դրա օգտագործման հմտություններին:

Ուսումնական գործընթացում համակարգչային ոչ մի ծրագիր չօգտագործող ուսուցիչների թիվը կազմել է հարցվածների ընդամենը 0.8%-ը: Հարցվածներն ուսումնական գործընթացում ամենաքիչն օգտագործում են C++ ծրագիրը՝ 0.4%, Pascal՝ 1.4%, Moodle հեռավար ուսուցման հարթակ՝ 1.7%: Ուսումնական գործընթացում ամենաշատն օգտագործվող ծրագրերն են Microsoft Word՝ 22.8%, Microsoft PowerPoint՝ 18.1%: Ավելի մանրամասն ուսումնական գործընթացում օգտագործվող ծրագրերի տվյալներին ծանոթացեք գծագիր 10–ում:

Գծապատկեր 10.



Պարզելու համար՝ արդյոք վերջին տարիներին ուսումնական գործընթացում համակարգչային ծրագրերի օգտագործման դինամիկան աճել է, թե նվազել, մենք համեմատել ենք 2018 և 2015 թվականին ուսուցիչների կողմից նշված ուսումնական գործընթացում ամենաշատը օգտագործվող 5 համակարգչային ծրագրերը: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 10-ում, Microsoft Word, Paint ծրագրերի ու Ինտերնետի օգտագործման հմտությունների օգտագործման ցուցանիշներն աճել են, իսկ Microsoft PowerPoint և Microsoft Excel ծրագրերինը՝ նվազել:

Գծապատկեր 11.



Չնայած նրան, որ ուսումնական գործընթացում ընդհանրապես ծրագրեր չօգտագործող ուսուցիչները կազմում էին հարցվածների ընդամենը 0.8%-ը, հետաքրքրական է տեսնել, թե որ ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչներ են նրանք: Այսպես, նրանց մեծամասնությունը՝ 61.5%-ը հումանիտար առարկաներ դասավանդող ուսուցիչներ են, 25.6%-ը՝ հասարակագիտական առարկաներ դասավանդող, 7.7% և 5.1%-ը համապատասխանաբար բնագիտական և ճշգրիտ առարկաներ դասավանդող ուսուցիչներ: Կարևոր է այն փաստը, որ ուսումնական գործընթացում ծրագրեր չօգտագործող ուսուցիչների ցանկում չկան ինֆորմատիկա առարկա դասավանդող ուսուցիչներ: Իսկ ինֆորմատիկա դասավանդող բոլոր հարցված ուսուցիչները ուսումնական գործընթացում օգտագործում է Microsoft Word ծրագիրը, 96.4%-ը՝ Microsoft Power Point, 92%-ը՝ Microsoft Excel: Կարևոր է նշել, որ Pascal և C++ ծրագրերն օգտագործում են ինֆորմատիկա դասավանդող ուսուցիչների կողմից:

Հետազոտության խնդիրներից մեկն է եղել պարզել, թե ՀՀ պետական դպրոցներում դասավանդող ուսուցիչները որ հայալեզու ռեսուրսներն են առավել շատ օգտագործում կրթական նպատակով: Ըստ այդմ՝ պարզ է դարձել, որ առավել հաճախ օգտագործվող 3 ռեսուրսներն են՝ Հայկական կրթական միջավայր պորտալը՝ 22.3%, Հայկական կրթական միջավայր պաշարների շտեմարանը՝ 22%, Կրթական ազգային ինստիտուտը՝ 14.5%: Կրթական նպատակով օգտագործվող այլ հայալեզու ռեսուրսների վերաբերյալ

վիճակագրությանը կարող եք ծանոթանալ գծապատկեր 12-ում: Ողջունելի է, որ հարցվածների ընդամենը 0.3%-ն է, որ կրթական նպատակով հայալեզու ռեսուրսներ ընդհանրապես չեն օգտագործում:

Գծապատկեր 12.

Համեմատելով այս տարի կրթության նպատակով օգտագործվող ամենաշատ նշված 5 հայալեզու էլեկտրոնային ռեսուրսների ցուցանիշները 2015 թվականին նույն ռեսուրսների ցուցանիշների հետ, տեսնում ենք, որ Հայկական կրթական միջավայր (armedu.am) ռեսուրսն ուսուցիչները սկսել են ավելի քիչ օգտագործել կրթական նպատակով, իսկ մնացած 4 ռեսուրսները՝ Հայկական կրթական միջավայր պաշարների շտեմարան (lib.armedu.am), Կրթության ազգային ինստիտուտ (aniedu.am), Dasaran.am և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ktak.am), հակառակը՝ ավելի հաճախ: Այդ ցուցանիշների դինամիկային կարող եք ծանոթանալ ստորև բերված գծապատկեր 13-ում:

Գծապատկեր 13.



Ուսուցիչների շրջանում ՏՀՏ կիրառելիության հաճախականությունը պարզելու համար խնդրել ենք ուսուցիչներին գնահատել, թե որքան հաճախ են նրանք կիրառում այս կամ այն ՏՀՏ-ն՝ ըստ նշված նպատակների: Գնահատման չափանիշները 4-ն էին՝ ամեն օր, հաճախ, հազվադեպ, երբեք: Արդյունքում ստացել ենք, որ հեռավար դասընթացներին մասնակցության նպատակով ՏՀՏ-ն ամենաքիչն է կիրառվում. հարցվածների 47.5%-ը այն երբեք չի օգտագործում, իսկ 38.5%-ը օգտագործում է հազվադեպ: Ի տարբերություն դրա, ուսումնական պրոցեսի հետ կապված տեղեկատվության որոնման նպատակով ՏՀՏ-ն ամեն օր կիրառում է հարցվածների 37.3%-ը, հաճախ՝ 57.9%-ը, իսկ դասին նախապատրաստման համար ամեն օր՝ 26.9%-ը, հաճախ՝ 59.4%-ը:

Գծապատկեր 14.



Ինչպես տեսնում եք վերոնշյալ գծապատկերում, ուսուցիչները, ՏՀՏ առավել հազվադեպ են օգտագործվում ադմինիստրատիվ հաշվետվությունների պատրաստման ու հեռավար դասընթացների մասնակցության նպատակով:

Ուշագրավ է այն, որ հարցված ուսուցիչների 99%-ի կարծիքով ՏՀՏ-ի ներդրումն ու օգտագործումը կնպաստի կրթության որակի բարելավմանը, և միայն 1% է կարծում, որ ՏՀՏ-ի ներդրումը կհանգեցնի կրթության որակի անկման: Վերջինների 42.9%-ը պատկանում են 26-35 տարքային խմբին, 28.6-ական տոկոսը՝ 46-55 և 56-62 տարիքային խմբերին:

ՏՀՏ կիրառելիության մասին ուսուցիչների դիրքորոշումները բացահայտելու համար նրանց խնդրել ենք գնահատել մի շարք դատողություններ ըստ 4 չափանիշների՝ «ընդհանրապես համաձայն չեմ», «ավելի շուտ համաձայն չեմ», «ավելի շուտ համաձայն եմ», «լիովին համաձայն եմ»: Հարցվածների 79.5%-ը լիովին համաձայն է, որ ՏՀՏ-ն նպաստում է ուսուցիչների ինքնազարգացմանը, 79.4%-ը՝ լավ ուսուցչի համար համակարգչային հմտություններին տիրապետելը պարտադիր է, 72%-ը՝ ժամանակակից կրթության կարևորագույն գործիքներից է: Միևնույն ժամանակ ուսուցիչների 14.7%-ն լիովին համաձայն են, որ ՏՀՏ կիրառելիությունը հանգեցնելու է դասագրքերի և տետրերի անտեսմանը: Ուսուցիչների 6.2%-ը լիովին համաձայն է այն մտքին, որ ՏՀՏ

կիրառելիությունը ավելորդ ծանրաբեռնվածություն է ուսուցչի համար: Ուսուցիչների 5.6%-ը լիովին համաձայն է, որ ՏՀՏ կիրառելիությունը դժվարեցնում է դասարանի կառավարումը, և 6%՝ հանգեցնում է գրագիտության անկման:

Գծապատկեր 15.



Ինչպես տեսնում ենք, ուսումնական գործընթացում ՏՀՏ կիրառելիության վերաբերյալ դրական երանգավորմամբ դատողությունների միջին գնահատականները մեծ մասամբ ձգտում են 4-ի, այսինքն ուսուցիչների մեծամասամբ համաձայն են դրանց հետ: Հարցված ուսուցիչների գնահատմամբ ամենաբարձր՝ 3.74 միջին գնահատական ունեցող

դատողություններն են՝ «ՏՀՏ-ն նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը» և «լավ ուսուցչի համար համակարգչային հմտություններին տիրապետելը պարտադիր է» դատողությունները: Սա խոսում է այն մասին, որ ուսուցիչների կարծիքով ՏՀՏ-ի ներդրումը ուսումնական գործընթացում առաջնահերթ նպաստավոր է հենց ուսուցիչների ինքնազարգացման համար: Ուսումնական պրոցեսում ՏՀՏ-ի օգտագործման վերաբերյալ ուսուցիչների դիրքորոշումների գնահատականները կարելի է տեսնել աղյուսակ 1.-ում:

Աղյուսակ 1.

ՏՀՏ կիրառելիության վերաբերյալ դատողություններ	**Միջին գնահատական**
Նպաստում է կրթության արդյունավետության բարձրացմանը	3.63
Նպաստում է ուսուցիչ-աշակերտ համագործակցությանը	3.38
Նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը	3.74
Նպաստում է աշակերտների ընդհանուր զարգացվածության աճին	3.48
Հանգեցնում է գրագիտության անկման	1.83
Դժվարեցնում է դասարանի կառավարումը	1.81
Հանգեցնում է գրքերի և տետրերի անտեսմանը	2.33
Ժամանակակից կրթության կարևորագույն գործիքներից է	3.66
Ավելորդ ծանրաբեռնվածություն է ուսուցչի համար	1.87
Մոտիվացնում է աշակերտներին սովորել	3.07
Հատկապես կարևոր է, քանի որ ոչ բոլոր աշակերտները տանը համակարգիչ ունեն	3.21
Լավ ուսուցչի համար համակարգչային հմտություններին տիրապետելը պարտադիր է	3.74

Այս դատողություններից որոշները կորելացվում են նշանակալի վճակագրական միջին կամ ուժեղ կապով: Սա նշանակում է, որ ուսուցիչների կողմից դատողությանը համաձայնության/անհամաձայնության գնահատականները համապատասխանում են մյուս դատողության համապատասխանաբար համաձայնության/անհամաձայնության գնահատականներին[1]: Օրինակ. «Նպաստում է կրթության արդյունավետության բարձրացմանը» դատողությունը կորելացվում է «Նպաստում է ուսուցիչ-աշակերտ համագործակցությանը» դատողության հետ: Սա նշանակում է, որ այն ուսուցիչները, ովքեր

[1] Կորելացիայի գործակիցների արժեքները տե՛ս հավելված 1-ում:

համաձայնվել են առաջին դատողության հետ, համաձայնվել են նաև երկրորդի հետ: Նույն սկզբունքը տարածվում է մյուս դատողությունների վրա՝

- «Նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը» դատողությունը կորելացվում է «Նպաստում է աշակերտների ընդհանուր զարգացվածության աճին» դատողության հետ
- «Հանգեցնում է գրագիտության անկման» դատողությունը կորելացվում է «Դժվարեցնում է դասարանի կառավարումը» դատողության հետ
- «Հանգեցնում է գրքերի և տետրերի անտեսմանը» դատողությունը կորելացվում է «Հանգեցնում է գրագիտության անկման» դատողության հետ
- «Մոտիվացնում է աշակերտներին սովորե» դատողությունը կորելացվում է «Հատկապես կարևոր է, քանի որ ոչ բոլոր աշակերտները տանը համակարգիչ ունեն» դատողության հետ:

Վերջին 5 տարիների ընթացքում համակարգչային դասընթացների և վերապատրաստումների մասնակցել են հարցվածների 58.2%-ը, չեն մասնակցել 41.8%-ը:

Համակարգչային դասընթացների կամ վերապատրաստումների վերջին 5 տարիների ընթացքում մասնակցած ուսուցիչների 56%-ը քաղաքային համայնքի բնակիչներ են, մնացած 44%-ը՝ գյուղական համայնքի բնակիչներ: Հարցվածների 86.6%-ը նշել են, որ կցանկանային մասնակցել համակարգչային դասընթացների, և միայն 13.4%-ն է նշել, որ չէին ցանկանա մասնակցել համակարգչային դասընթացների:

Գծապատկեր 16.



Վերջին 5 տարիների ընթացքում համակարգչային դասընթացների ու վերապատրաստումների մասնակցած հարցվածների 88.9%-ը, իսկ չմասնակցածների՝ 83.2%-ը նշել են, որ նորից կցանկանար մասնակցել համակարգչային դասընթացների: Սա վկայում է այն մասին, որ ուսուցիչները ոչ միայն գնահատում են համակարգչային հմտությունների դերը ուսումնական պրոցեսի կազմակերպման հարցում, այլև ցանկանում են բարձրացնել իրենց ՏՀՏ գիտելիքների և հմտությունների մակարդակը:

Հարցին, թե ինչու չէին ցանկանա մասնակցել համակարգչային դասընթացներին, վերջինների 39%-ը պատասխանել է՝ գիտելիքները բավարար են, 48%-ը՝ ժամանակի սղություն, 2%-ը՝ ցանկություն չունի, և 11%-ը՝ տարիքային առանձնահատկությունների պատճառով:

Գծապատկեր 17.



Գծապատկեր 18–ում կարող ենք տեսնել, թե ինչ ծրագրեր են ցանկանում սովորել ուսուցիչները: Ինչպես տեսնում ենք, ամենաշատ նշված պատասխանը Moodle (հեռավար ուսուցման հարթակ) է՝ 13.6%, դրան հաջորդում են Photoshop-ն ու Microsoft Excel-ը՝ համապատասխանաբար 12.4% և 12%-ով:

Գծապատկեր 18.



Համակարգչի կիրառման հմտությունների ձեռք բերման ճանապարհների վերաբերյալ տվյալները կարող եք տեսնել գծապատկեր 19–ում: Հարցված ուսուցիչների մեծ մասը՝ 47%-ը, համակարգչի կիրառման հմտություններ ձեռք են բերել մասնակցելով անվճար դասընթացների և վերապատրաստումների: Հաջորդ խումբը ինքնուրույն սովորած ուսուցիչների խումբն է, որը նշել է հարցվածների 31%-ը: Այնուհետ վճարովի ուսումնական կենտրոններ հաճախած ուսուցիչներն են՝ 12%, և ընտանիքի անդամների/ծանոթների օգնությամբ համակարգչի կիրառման հմտություններ ձեռք բերած ուսուցիչները՝ 10%:

Գծապատկեր 19.



Ամփոփում

Ուսուցիչների շրջանում ՏՀՏ կոմպետենտության մակարդակի և կիրառելիության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները թույլ են տալիս պատկերացում կազմել ՀՀ բոլոր մարզերի պետական դպրոցների ուսուցիչների ՏՀՏ գրագիտության մասին: Այս հետազոտության արդյունքում հնարավոր եղավ պարզել ուսուցիչների դիրքորոշումները ինչպես ուսումնական գործընթացում ՏՀՏ ներդրման և կիրառելության կարևորության վերաբերյալ, այնպես էլ նրանց կողմից ՏՀՏ-ի կիրառման հաճախականությունն ու սեփական համակարգչային գիտելիքների գնահատումը, համեմատել այդ դինամիկան նախորդ տարիներին անցկացված հետազոտության արդյունքում ստացված տվյալների հետ:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ պետական դպրոցների ուսուցիչների շրջանում ՏՀՏ կոմպետենտության մակարդակի և կիրառելիության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները գալիս ենք հետևյալ հիմնական եզրակացություններին.

- Ուսուցիչների մեծ մասը՝ 60%-ը 5 տարի և ավել է, ինչ ուսումնական գործընթացում օգտագործում է համակարգիչ: Այս ցուցանիշը հատուկ է բոլոր տարիքային խմբերին պատկանող ուսուցիչներին, այսինքն ուսումնական գործընթացում համակարգչի օգտագործման տարիների և ուսուցիչների տարիքի մեջ վիճակագրական կապ չկա:
- Ուսուցիչները մեծ մասի կողմից որպես լավ տիրապետվող համակարգչային գիտելիքների շարքում նշվել են ինտերնետի օգտագործման հմտությունները (63.7%) և էլեկտրոնային փոստի օգտագործման հմտությունները (59.7%): Մյուս կողմից ուսուցիչների մեծ մասը չեն տիրապետում ինտերակտիվ գրատախտակի օգտագործման հմտություններին(57.9%) և Microsoft Access ծրագրին (56.7%): Ինտերակտիվ գրատախտակի օգտագործման հմտություններին ընդհանրապես չգիրապետող ուսուցիչների մեծ մասը՝ 85.19%-ը դասավանդում են այն դպրոցներում, որոնք այդ գրատախտակներից չունեն:
- Ուսումնական գործընթացում ուսուցիչների կողմից ամենաշատն օգտագործվող ծրագրերն են Microsoft Word՝ 15%, Microsoft PowerPoint՝ 18.1%, Ինտերնետի օգտագործման հմտություններ՝ 17% և Microsoft Excel՝ 10.7%: Ուսումնական գործընթացում համակարգչային ծրագրեր չի օգտագործխում ուսուցիչների ընդամենը 0.8%-ը:

- Կրթական նպատակով ամենաշատ օգտագործվող հայալեզու էլեկտրոնային ռեսուսներն են armedu.am՝ 22.3%, lib.armedu.am՝ 22%, aniedu.am՝ 14.5%, dasaran.am՝ 11.2% և ktak.am՝ 10.6%: Հայկական էլեկտրոնային ռեսուրսներից կրթական նպատակով ընդհանրապես չեն օգտվում ուսուցիչների ընդամենը 0.3%-ը:
- Ուսուցիչների մեծ մասը լիովին համաձայն են հետևյալ դատողությունների հետ՝ ՏՀՏ-ն նպաստում է ուսուցիչների ինքնազարգացմանը (79.5%), լավ ուսուցչի համար համակարգչային հմտություններին տիրապետելը պարտադիր է (79.4%), ժամանակակից կրթության կարևորագույն գործիքներից է (72%):
- Ուսուցիչների համար սովորելու համար ամենացանկալի ծրագրերի շարքում են Moodle (հեռավար ուսուցման հարթակը)՝ 13.6%, Photoshop՝ 12.4%, Microsoft Excel 12%, Microsoft Access՝ 11.3%:

Հավելված

Կորելիացիայի գործակիցների արժեքները տե՛ս ստորև:

- «Նպաստում է կրթության արդյունավետության բարձրացմանը» դատողությունը կորելացվում է «Նպաստում է ուսուցիչ-աշակերտ համագործակցությանը» դատողության հետ. կորելացիոն գործակիցը՝ 0.606, նշանակալիությունը՝ 0.000:
- «Նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը» դատողությունը կորելացվում է «Նպաստում է աշակերտների ընդհանուր զարգացվածության աճին» դատողության հետ. կորելացիոն գործակիցը՝ 0.515, նշանակալիությունը՝ 0.000:
- «Հանգեցնում է գրագիտության անկման» դատողությունը կորելացվում է «Դժվարեցնում է դասարանի կառավարումը» դատողության հետ. կորելացիոն գործակիցը՝ 0.420, նշանակալիությունը՝ 0.000:
- «Հանգեցնում է գրքերի և տետրերի անտեսմանը» դատողությունը կորելացվում է «Հանգեցնում է գրագիտության անկման» դատողության հետ. կորելացիոն գործակիցը՝ 0.438, նշանակալիությունը՝ 0.000:
- «Մոտիվացնում է աշակերտներին սովորե» դատողությունը կորելացվում է «Հատկապես կարևոր է, քանի որ ոչ բոլոր աշակերտները տանը համակարգիչ ունեն» դատողության հետ. կորելացիոն գործակիցը՝ 0.407, նշանակալիությունը՝ 0.000: